

Նոր խմբագրությամբ  
գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

---

22 դեկտեմբերի 2009թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ  
(Նոր խմբագրությամբ)**

# ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր դրույթներ

## 1. Կանոնների կարգավորման առարկան

- 1.1 Սույն կանոնները սահմանում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև՝ Դեպոզիտարիա) կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված գործառնությունների շրջանակներում մատուցվող ծառայությունների սակագները:

## 2. Կանոնների կիրառման ոլորտը

- 2.1 Սույն կանոնների պահանջները կիրառվում են այն թողարկողների, գրանցված սեփականատերերի (անվանատերերի), արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամների և այլ անձանց նկատմամբ, ովքեր Օրենքով, Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով դիմում և օգտվում են Դեպոզիտարիայի սույն կանոններով սահմանված ծառայություններից:

## 3. Կանոններում օգտագործվող հիմնական հասացությունները

- 3.1 Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝
- 3.1.1. **«ՀՀ դրամ»**. Հայաստանի Հանրապետության դրամ.
  - 3.1.2. **«սակագին»**. սույն կանոններով սահմանված Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով.
  - 3.1.3. **«հաշվարկային եռամսյակ»**. տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Առաջին հաշվարկային եռամսյակ է համարվում արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագրի կնքման օրվանից մինչև տվյալ հաշվարկային եռամսյակի վերջն ընկած ժամանակաշրջանը.
  - 3.1.4. **«իրավասու էլեկտրոնային հասցե»**. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված, Դեպոզիտարիայի, իրավաբանական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), վերջինիս իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի քարտի տեղեկություններում կամ Դեպոզիտարիայի և նրա կանոններով սահմանված արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի միջև կնքված համապատասխան պայմանագրի դրույթներում ներառված համապատասխան էլեկտրոնային հասցե, ինչպես նաև Դեպոզիտարիա ներկայացված դիմումում նշված էլեկտրոնային հասցե: «Իրավասու էլեկտրոնային հասցեն» նաև այն հասցեն է, որի վերաբերյալ տեղեկությունը Դեպոզիտարիային է տրամադրվել պետական մարմնի կողմից ներկայացված համապատասխան գրությամբ.
  - 3.1.5. **«ռեպո գործարք»**. գործարքի կողմերի միջև երկու փոխկապակցված՝ ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների կնքման վերաբերյալ ձեռք բերված

համաձայնություն, որոնցից առաջինով կողմերից մեկը՝ դրամային միջոցների փոխառում, վաճառում է տվյալ ֆինանսական գործիքը դրամային միջոցների փոխատուին, իսկ երկրորդով պարտավորվում է նրանից հետո գնել դրանք ապագայում՝ տվյալ պահին համաձայնեցված պայմաններով:

- 3.1.6. **«հակադարձ ռեյո գործարք»**. գործարքի կողմերի միջև երկու փոխկապակցված՝ ռեյո-ուղղակի և ռեյո-հետադարձ գործարքների կնքման վերաբերյալ ձեռք բերված համաձայնություն, որոնցից առաջինով կողմերից մեկը՝ ֆինանսական գործիքի փոխառում, գնում է ֆինանսական գործիքը դրանց փոխատուից, իսկ երկրորդով պարտավորվում է նրան հետ վաճառել դրանք ապագայում՝ տվյալ պահին համաձայնեցված պայմաններով:
- 3.1.7. **«ռեեստր»**. թողարկողի անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի), արժեթղթերի և դրանցով հավաստված իրավունքների վերաբերյալ միասնական համակարգ, որն ապահովում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի), նրանց լիազոր ներկայացուցիչների, գրանցված սեփականատերերին (անվանատերերին) պատկանող (անվանատերերի անվամբ գրանցված) արժեթղթերի քանակի և դասի, ինչպես նաև դրանց վերաբերյալ այլ տեղեկությունների նույնացումը:
- 3.1.8. **«փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանցում, տրամադրում»**. որևէ իրավասու էլեկտրոնային հասցեից Դեպոզիտարիայի կանոններով թույլատրված տեսակի հանձնարարագրերի (հարցումների) էլեկտրոնային եղանակով փոխանցում Դեպոզիտարիայի իրավասու էլեկտրոնային հասցեին, ինչպես նաև Դեպոզիտարիայի իրավասու էլեկտրոնային հասցեից փաստաթղթի/փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով տրամադրում համապատասխան դիմումատուին/հանձնարարագիրը և/կամ հարցումը ներկայացնողին:
- 3.1.9. **«արժեթղթերի հաշվարկային համակարգ»**. արժեթղթերի հաշվարկային համակարգն Դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին» կանոնակարգով սահմանված կարգով արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում փոխադարձ պարտավորությունների կատարման և այդ պարտավորությունների կատարումը երաշխավորող վարչական, տեխնիկական և իրավական միջոցների ամբողջությունն է:
- 3.1.10. **«արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ»**. Դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին» կանոնակարգով սահմանված կարգով արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ դարձած անձը:
- 3.1.11. **«արտաբորսայական շուկա»**. չկարգավորվող արժեթղթերի շուկա:
- 3.1.12. **«տրանշ»**. արժեթղթերի թողարկման մեկ որոշմամբ սահմանված մի քանի փուլերով կազմակերպված արժեթղթերի առաջարկներից մեկը, որոնք իրարից կարող են տարբերվել տեղաբաշխման, մարման և այլ պայմաններով ու ժամկետներով:

3.2 Մույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունները:

#### 4. Ծառայությունների դիմաց վճարվող դրամական միավորը

- 4.1 Մույն կանոններով սահմանված Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է ՀՀ դրամով:
- 4.2 Եթե Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը

վերահաշվարկվում է ՀՀ դրամով արտահայտված գումարի, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

- 4.3 Եթե ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա ծառայության դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է ելնելով ծառայության մատուցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը Դեպոզիտարիա ներկայացնելու պահին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքից:

## **5. Ծառայությունների դիմաց վճարման կարգը**

- 5.1 Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է կանխիկ ձևով՝ Օրենքով, այլ իրավական ակտերով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով ծառայություններից օգտվելու համար համապատասխան փաստաթղթերը Դեպոզիտարիա ներկայացնելու պահին (հանձնարարագիրը/հարցումը էլեկտրոնային ձևով փոխանցելուց առաջ) կամ անկանխիկ ձևով (փոխանցումով)՝ մինչև Օրենքով, այլ իրավական ակտերով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով ծառայությունից օգտվելու համար համապատասխան փաստաթղթերը Դեպոզիտարիա ներկայացնելը (հանձնարարագիրը/հարցումը էլեկտրոնային ձևով փոխանցելը), բացառությամբ այն դեպքերի, երբ Դեպոզիտարիա վճարման երաշխիքներ են ներկայացվել, վճարման երաշխիքն ամրագրված է վճարողի և Դեպոզիտարիայի միջև կնքված որևէ պայմանագրի դրույթներով՝ մինչև որոշակի ժամկետի ավարտը ծառայության մատուցման դիմաց սույն կանոններով սահմանված չափով վճարումը կատարելու վերաբերյալ, ինչպես նաև՝ վճարողը արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ է: Ընդ որում պայմանագրային դրույթներով ամրագրված երաշխիքները հիմք են, որպեսզի վճարողը՝ որպես թողարկող, գրանցված սեփականատեր, անվանատեր, արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ կամ այլ կարգավիճակով հանդես գալու դեպքում, Դեպոզիտարիայի բոլոր ծառայություններից օգտվելու դիմաց վճարումներն իրականացնի Դեպոզիտարիայի հետ կնքած համապատասխան պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Անկանխիկ ձևով վճարման իրականացման դեպքում, Օրենքով, այլ իրավական ակտերով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ծառայությունից օգտվելու համար Դեպոզիտարիա ներկայացվող համապատասխան փաստաթղթերին կցվում է նաև վճարումը կամ վերջինիս երաշխիքը հավաստող փաստաթուղթը:
- 5.2. Սույն կանոնների 6.1. կետով սահմանված՝ Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայության դիմաց թողարկողի կողմից վճարումը, Դեպոզիտարիայի հետ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագիր կնքելիս, թողարկողը իրականացնում է առաջին հաշվարկային եռամսյակի համար՝ կանխավճարի տեսքով: Եթե թողարկողը Դեպոզիտարիայի հետ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագիր է կնքում հաշվարկային եռամսյակի վերջին ամսվա ընթացքում, ապա այդ թողարկողը կանխավճար է կատարում նաև տվյալ հաշվարկային եռամսյակին հաջորդող հաշվարկային եռամսյակի համար: Առանց կանխավճարի կատարումը հավաստող փաստաթղթի թողարկողի հետ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագիր չի կնքվում:
- 5.3. Առաջին հաշվարկային եռամսյակից (սույն կանոնների 5.2. կետի սահմանված դեպքում՝ առաջին հաշվարկային եռամսյակին հաջորդող հաշվարկային եռամսյակից) հետո սույն կանոնների 6.1. կետով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է դրան հաջորդող յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:
- 5.4. Սույն կանոնների 6.2. կետով սահմանված ծառայության դիմաց տարվա մեջ երկու անգամյա վճարումը կատարվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած

ժամանակահատվածի համար: Սույն կանոնների 6.2. կետով սահմանված ծառայության մատուցման դիմաց գումարները հաշվարկվում են տարվա մեջ երկու անգամ հետևյալ կարգով՝ առաջին անգամ հուլիսի 1-ի դրությամբ և երկրորդ անգամ դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար՝ համաձայն ստորև բերված Բանաձևի 1-ի՝

Բանաձև 1.

$$\text{ԾՎ} = (\text{ԲՔ} * \text{ՀՍ} / 182) * \text{ՌՎՊՕ} \text{ որտեղ՝}$$

ԾՎ - ծառայության վճար,

ԲՔ - բաժնետերերի քանակ,

ՀՍ - համապատասխան սակագին, որը սահմանված է սույն կանոնների 6.2. կետով,

ՌՎՊՕ – հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ կամ հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում այն օրերի քանակն է, որոնց ընթացքում Դեպոզիտարիան մատուցել է տվյալ թողարկողի ռեեստրում գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշվառման և պահպանման ծառայություն:

Այն դեպքում, երբ Դեպոզիտարիայի հետ անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագիրը լուծվում է մինչև հուլիսի 1-ը (հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար) կամ դեկտեմբերի 31-ը (հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար), ապա սույն կանոնների 6.2. կետով սահմանված սակագների և Բանաձև 1-ի համաձայն հաշվարկը կատարվում է ըստ լուծման ամսաթվի դրությամբ թողարկողի թողարկված արժեթղթերի յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար, իսկ հաշվարկված համապատասխան գումարի վճարումը կատարվում է նախապես՝ մինչև Դեպոզիտարիայի հետ արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագրի լուծման պահը: Եթե լուծման պահի դրությամբ առկա է որևէ ծառայության գծով կանխավճար, ապա այն վերահաշվարկվում է և ենթակա է վերադարձման:

- 5.5. Թողարկողը պարտավոր է սույն կանոնների 6.2. կետով սահմանված ծառայության դիմաց վճարումը հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար կատարել է մինչև տվյալ տարվա հուլիսի 30-ը ներառյալ, իսկ հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը ներառյալ: Արժեթղթերի հաշվարկային համակարգի սպասարկման ամսական անդամավճարի վճարումը իրականացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին 5-րդ աշխատանքային օրը ներառյալ: Կարգավորող շուկայի օպերատորի կողմից սույն կանոնների 8.2. կետով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է կիսամյակային սկզբունքով, վճարման ենթակա գումարի մի կեսը վճարվում է մինչև տվյալ տարվա հուլիսի 30-ը ներառյալ, իսկ մյուս կեսը մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը ներառյալ:
- 5.6. Թողարկողի կողմից սույն կանոնների 5.3. և 5.4. կետերով և հաշվարկային համակարգի անդամի կողմից 5.5. կետով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ժամկետներում համապատասխան գումարների վճարման չկատարման պարագայում Դեպոզիտարիան համապատասխանաբար տվյալ թողարկողի և հաշվարկային համակարգի անդամի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով:
- 5.7. Դեպոզիտարիայի կողմից սույն կանոնների 2-րդ գլխով սահմանված այն ծառայությունների սակագները, որոնք ենթակա են հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավելացած արժեքի հարկով, չեն ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվող ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

- 5.8. Սույն կանոններով սահմանված են այն ծառայությունները, որոնց մատուցումը Գեպոզիտարիան իրականացնում է վճարովի հիմունքներով: Սույն կանոններով չսահմանված ծառայությունները մատուցվում են անվճար:
- 5.9. Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ը ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

## **ԳԼՈՒՄ 2. Ծառայությունների սակագները**

5.10. Այն դեպքերում, երբ թողարկողի կամ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) պահանջով կամ դիմումի/հանձնարարականի/հարցման հիման վրա սույն կանոններով սահմանված որևէ ծառայության մատուցումը կատարվում է գործարքի/գործառնության կամ այլ ծառայության մատուցման դիմումի/հանձնարարագրի/հարցման ներկայացման օրը, ապա սույն կանոններով սահմանված սակագների չափերը կրկնապատկվում են (կրկնապատկվում են նաև սահմանաչափերը, եթե սույն կանոններով դրանք նախատեսված են ):

### **6.Թողարկողներին մատուցվող ծառայություններ**

6.1. Թողարկողի արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի (այսուհետ՝ ռեեստր) վարման և պահպանման համար գանձվում է.

6.1.1. Ռեեստրի վարում և պահպանում	3000 ՀՀ դրամ ամսական
-----------------------------------	----------------------

6.2. Թողարկողի ռեեստրում գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշվառման և պահպանման համար գանձվում է.

6.2.1. մինչև 49-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	700 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.2. 50-ից մինչև 99-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	325 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.3. 100-ից մինչև 199-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	300 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.4. 200-ից մինչև 299-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	260 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.5. 300-ից մինչև 499-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	230 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.6. 500-ից մինչև 699-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	170 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.7. 700-ից մինչև 999-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	150 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ)

	համար
6.2.8. 1000-ից մինչև 1999-ը ներառյալ գրանցված սեփականատեր (անվանատերեր)	125 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար
6.2.9. 2000 և ավելի գրանցված սեփականատեր (անվանատերեր)	75 ՀՀ դրամ յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար

**6.3 Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված ծառայությունների համար գանձվում է**

6.3.1 Թողարկողի թողարկման հաշվից արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի ) դուրս գրում և հաշվեգրում դրանց սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներին (բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)	տեղաբաշխված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ընդհանուր անվանական արժեքի 0.05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 27 000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600.000 ՀՀ դրամը, անկախ հանձնարարագրերի քանակից
6.3.2 Թողարկողի թողարկման հաշվից պարտատոմսերի դուրս գրում և հաշվեգրում դրանց սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներին	27 000 ՀՀ դրամ պարտատոմսերի մեկ տեղաբաշխման ողջ գործնթացի (տրանզներով թողարկման դեպքում մեկ տրանշի ) համար անկախ հանձնարարագրերի քանակից և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքից:
6.3.3 Բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման ժամանակ թողարկողի թողարկման հաշվից բաժնետոմսերի դուրս գրում և հաշվեգրում դրանց սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներին	տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 27 000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 200 000 ՀՀ դրամը, անկախ հանձնարարագրերի քանակից

**6.4 Թողարկողի կորպորատիվ գործողությանը պայմանավորված ծառայությունների համար գանձվում է.**

6.4.1. Կանոնադրական կապիտալի ավելացում` բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ և կանոնադրական կապիտալի նվազեցում` բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ, արժեթղթերի հետգում և կամ ձեռք բերում, արժեթղթերի ձեռքբերման կամ հետգնման արդյունքում արժեթղթերի մարում, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման) արդյունքում արժեթղթերի փոխարկում այլ արժեթղթերով, արժեթղթերի համախմբում (կոնսոլիդացիա), արժեթղթերի բաժանում, թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկում մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերով	կորպորատիվ գործողության արդյունքում փոխարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 30 000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը
6.4.2. Թողարկողի կողմից կորպորատիվ գործողության իրականացման արդյունքում գրանցված սեփականատերերին (անվանատերերին) իրենց անձնական հաշիվներում կտորակային արժեթղթերի հաշվառման վերաբերյալ գրավոր ծանուցում	5000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ծանուցման համար

**6.5 Գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի , թողարկողի հարցմամբ իր կողմից թողարկված արժեթղթերով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկանքի, թողարկողի հարցմամբ այլ տեղեկությունների (բացառությամբ գործառնությունների վերաբերյալ) տրամադրման համար գանձվում է.**

<p>6.5.1. Թողարկողի հարցման հիման վրա՝ իր տվյալ դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում (բացառությամբ առաջին անգամ տրամադրման դեպքի), տվյալ տարվա ընթացքում երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ անգամ</p>	<p>առձեռն՝ 6000 ՀՀ դրամ,          էլեկտրոնային տրամադրման դեպքում          3000 ՀՀ դրամ,          փոստային առաքման դեպքում՝ 7 000 ՀՀ          դրամ          գրանցված սեփականատերերի          (անվանատերերի) մեկ ցուցակը</p>
<p>6.5.2. Թողարկողների հարցման հիման վրա իրենց արժեթղթերով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում</p>	<p>7000 ՀՀ դրամ,          էլեկտրոնային տրամադրման դեպքում          5000 ՀՀ դրամ          մեկ տեղեկանքը</p>
<p>6.5.3. Թողարկողի հարցման հիման վրա այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում</p>	<p>6000 ՀՀ դրամ,          էլեկտրոնային տրամադրման դեպքում          5000 ՀՀ դրամ          մեկ տեղեկանքը</p>

**6.6 Թողարկողի կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխության համար գանձվում է.**

<p>6.6.1. Թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխության (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը) կատարում</p>	<p>1000 ՀՀ դրամ մեկ հանձնարարականը/          գործառնությունը</p>
---	--

**6.7. Արժեթղթերի ծածկագրի շնորհման համար գանձվում է.**

<p>6.7.1. Արժեթղթերի ծածկագրի շնորհում</p>	<p>50 000 ՀՀ դրամ մեկ շնորհումը/          գործընթացը</p>
--	--

**7. Գրանցված սեփականատերերին (անվանատերերին) և Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված անձանց շրջանակներից դուրս այլ անձանց մատուցվող ծառայությունների սակագներ**

**7.1 Արժեթղթերի փոխանցման համար գանձվում է**

<p>7.1.1. Արժեթղթերով (բացառությամբ պարտատոմսերի) առուվաճառքի, նվիրատվության (բացառությամբ նվիրատվության գործարքների հիման վրա արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին, եթե նվիրատվությունը կատարվում է Հայաստանի Հանրապետությանը, հասարակական միավորումներին, հիմնադրամներին, մանկատներին, օժանդակ (արատավոր և հաշմանդամ երեխաների ուսուցման համար նախատեսված) դպրոցներին, զոհված ազատամարտիկների և ՀՀ սահմանների պաշտպանության համար զոհված զինծառայողների ընտանիքների</p>	<p>հանձնարարականում (դատավճռում կամ վճռում) նշված փոխանցվող արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքի ( ընդհանուր անվանական արժեքի) 0.05%- ի չափով, սակայն ոչ պակաս քան 4500 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը</p>
---	---

անդամներին՝ ամուսիններին, անչափահաս երեխաներին, առանց խնամքի մնացած ծնողներին) ցանկացած այլ ձևով օտարման (բացառությամբ սույն կանոնների 7.1.3. և 7.1.4. կետերի), պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման հիման վրա կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ) արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին	
7.1.2. Ժառանգության արդյունքում արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին	ժառանգության առարկա փոխանցվող արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքի (ընդհանուր անվանական արժեքի) 0,05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 1000 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը
7.1.3. Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին	4500 ՀՀ դրամ մեկ փոխանցման հանձնարարականը
7.1.4. Ցանկացած հիմքով (բացառությամբ սույն կանոնների 7.1.3. կետի և նվիրատվության գործարքների հիման վրա պարտատոմսերի փոխանցման մեկ անձնական հաշվից մյուսին, եթե նվիրատվությունը կատարվում է Հայաստանի Հանրապետությանը, հասարակական միավորումներին, հիմնադրամներին, մանկատներին, օժանդակ (արատավոր և հաշմանդամ երեխաների ուսուցման համար նախատեսված) դպրոցներին, զոհված ազատամարտիկների և ՀՀ սահմանների պաշտպանության համար զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին՝ ամուսիններին, անչափահաս երեխաներին, առանց խնամքի մնացած ծնողներին) պարտատոմսերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին	1000 ՀՀ դրամ մեկ փոխանցման հանձնարարականը/հանձնարարագիրը

**7.2 Արժեթղթերի արգելադրման համար գանձվում է.**

7.2.1. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվում արժեթղթերի արգելադրում (բացառությամբ կարգավորվող շուկայում այդ արժեթղթերով գործարքներին իրականացման համար արժեթղթերի առևտրային արգելադրման դեպքերի)	հանձնարարագրում նշված արգելադրման առարկա հանդիսացող արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքի (ընդհանուր անվանական արժեքի 0,05%-ի չափով, սակայն ոչ պակաս քան 5300 ՀՀ դրամը և ոչ ավել քան 600 000 ՀՀ դրամը
--	--

**7.3. Ռեեստրից կամ անձնական հաշվից քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների, ինչպես նաև այլ հարցումների պատասխանի տրամադրման համար գանձվում է.**

7.3.1. Ռեեստրից կամ անձնական հաշվից քաղվածքի կամ անձնական հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրում բացառությամբ գործառնության կատարման օրվա ընթացքում գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) պահանջով, կամ դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի համապատասխան հարցման կամ որոշման հիման վրա վրա ռեեստրից կամ անձնական հաշվից քաղվածքի կամ անձնական հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրման դեպքերի	առձեռն՝ 1000 ՀՀ դրամ, Էլեկտրոնային տրամադրման դեպքում 500 ՀՀ դրամ, փոստային առաքման դեպքում՝ 2 000 ՀՀ դրամ մեկ քաղվածքը/գործառնությունների մասին տեղեկանքը
7.3.2. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) հարցման հիման վրա այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ ռեեստրից կամ անձնական հաշվից տեղեկանքի տրամադրում	1000 ՀՀ դրամ, Էլեկտրոնային տրամադրման դեպքում 500 ՀՀ դրամ մեկ քաղվածքը/գործառնությունների

	մասին տեղեկանքը
7.3.3. Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված անձանց շրջանակներից դուրս այլ անձանց կողմից ներկայացված հարցումների վերաբերյալ պատասխանի ներկայացում	7000 ՀՀ դրամ մեկ հարցման պատասխանը, գանձվում է հարցումը կատարած անձից

### **8. Արժեթղթերի հաշվարկային համակարգի սպասարկում**

8.1. Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամության և համակարգի ծառայություններից օգտվելու համար արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամից գանձվում է .

8.1.1.Արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակի շնորհում	60 000 ՀՀ դրամ մեկ շնորհման գործընթացը
8.1.2.Արժեթղթերի հաշվարկային համակարգի սպասարկման անդամավճար	10 000 ՀՀ դրամ ամսական

8.2. Կարգավորվող շուկայում իրականացված առևտրի արդյունքում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշման, դրանց հաշվանցման (քլիրինգի) և վերջնահաշվարկի համար կարգավորվող շուկայի օպերատորից գանձվում է.

8.2.1.Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշում և դրանց հաշվանցում (քլիրինգ)	1 500 000 ՀՀ դրամ տարեկան
8.2.2.Կարգավորվող շուկայում կնքված գործարքների առարկա արժեթղթերի և դրամական միջոցների վերջնահաշվարկ	2 000 000 ՀՀ դրամ տարեկան

### **9. Նոր ծառայություններ**

9.1.Ծանուցում թողարկողին արժեթղթերի շարժի մասին (արժեթղթերի փոխանցման հանձնարարականների և գրավի հիմքով արգելադրման վերաբերյալ )	42000 ՀՀ դրամ տարեկան, անկախ ծանուցումների քանակից
9.2. Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում	300 000 ՀՀ դրամ տարեկան
9.3. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար	գրավի առարկա արժեթղթի (արժեթղթերի) ընդհանուր անվանական արժեքի 1%-ի չափով
9.4. Նախկինում ներկայացված հանձնարարագրի ճշգրտման հանձնարարագիր	15 000 ՀՀ դրամ մեկ հանձնարարագիրը/գործառնությունը
9.5. Արժեթղթերի փոխանցման գործարքների համար «Առաքում վճարման դիմաց» սկզբունքի ապահովում արտաբորսայական շուկայում	փոխանցվող արժեթղթի (արժեթղթերի) ընդհանուր անվանական արժեքի 1%-ի չափով
9.6. Արժեթղթերի տեղաբաշխման, կորպորատիվ գործողության, արժեթղթերի արգելադրման և արժեթղթերի փոխանցման ծառայություններ, որոնց դեպքում հաճախորդը գրավոր ցանկություն է հայտնում օգտվելու նաև գործընթացի հետ կապված համապատասխան խորհրդատվությունից: «Ծառայություն + խորհրդատվություն»	համապատասխան ծառայության համար նախատեսված սակագնի կրկնակի չափով (կրկնապատկվում են նաև սահմանաչափերը)

### ԳԼՈՒԽ 3. Անցումային դրույթներ

#### 10. Կանոններն ուժի մեջ մտնելը

10.1. Սույն կանոնները հաստատվելով Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և գրանցվելով ՀՀ կենտրոնական բանկում, ուժի մեջ են մտնում 2010թ հունվարի մեկից:

10.2. Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցումից հետո:

10.2. Սույն կանոններով սահմանված ծառայությունների սակագների յուրաքանչյուր փոփոխության դեպքում Դեպոզիտարիան պարտավոր է այդ մասին պատշաճ ծանուցել իր հետ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պայմանագրային հարաբերություններում գտնվող բոլոր թողարկողներին, ինչպես նաև հաշվարկային համակարգի անդամներին: Պատշաճ է համարվում իր ինտերնետային կայքում կատարված փոփոխության և/կամ լրացման կամ նոր խմբագրությամբ կանոնների տեղադրումը, ինչպես նաև Դեպոզիտարիայի գործունեության վայրում վերոնշյալ կանոնների հրապարակումը:

10.3. Սույն կանոնների 9. կետով սահմանված նոր ծառայությունների համար սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում դրանց իրականացման կարգը և պայմանները սահմանող նորմատիվ իրավական ակտեր ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունվելուց (ուժի մեջ մտնելուց) և Դեպոզիտարիայի համապատասխան կանոնները ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելուց հետո:

Հաստատված է՝

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

Դիտորդ խորհրդի

26.11.2009թ որոշմամբ

Արմեն Սելիքյան

ք. Երևան